ԱՐՑԱԽՆ ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Մոսկուայում կատարուող դէպքերին յաջորդած առաջին օրերին, երբ բաղաքական իրադրութիւնների փոփոխութեան սլաքի ուղղութիւնը տեսանելի չէր, Արցախում ստեղծուած էր յարաբերական դադարի եւ սպասողականութեան վիճակ: Սակայն աւարտուեց ԽՍՀՄ Գխ համագումարը, որը որեւէ վերաբերմունք չարտայայտեց Արցախի վերաբերեալ, եւ իրադարձութիւնները շարունակեցին զարգանալ իրենց նախկին տրամաբանութեամբ:

Արցախում այս օրերին, նոր ծաւալում են ստանում բրոնեութիւնները, թալանն ու աւազակութիւնները եւ եթէ դրանք խոշոր չափեր չունեն, ապա այն բարեբախտութեան բերմամբ, որ խորհրդային զօրքը այս օրերին չի աջակցում ազերիներին: Այս առիթով ասենք նաեւ, որ, ըստ ամենայնի, զօրքը, իր կողմ բաշուելուց առաջ (հաւանաբար Աֆղանստանի փորձից ելնելով), բաւականին զինամթերք եւ ռազմական տեխնիկայ է թողել ազերիներին, որոնք էլ այն ըստ նախատեսուածութեան գործի են դնում: Այնուամենայնիւ, հակառակորդը դեռ խուսափում է մեծ ընդհարումներից, բանի որ մի բանի փորձը (ինչպէս, օրինակ, Շահումեանի շրջանի աղբրբեջանաբնակ Շեֆեզ գիւղից կազմակերպուած սադրանքները, որոնք աւարտուեցին նշեալ գիւղի դատարկումով) ցոյց են տալիս, որ նման ոտնձգութիւնները առանց մեծ եղբոր օգնութեան իրենց համար վատ արդիւնք են ունենում: Հենց այս էլ հիմնական պատճառ է, որ Շահումեանի շրջանում, օրինակ, իրավիճակը շարունակում է մնալ կայուն: Դրա փոխարէն բուն Արցախի տարածքում գրանցուել են ազգամիջեան առճակատումների մի շարք դէպքեր: Շատ դէպքերում յանցագործութիւնների փոքրիկ կայծից հզօր բոց է բռնկում, որ այնուհետեւ մեծացնում է նաեւ իր մասշտաբներն ու բռնկման սահմանները: Այդպիսի մի օրինակ էր Հադրութի շրջանի Տող գիւղում տեղի ունեցած ընդհարումների փաստը, որի արդիւնքում զոհերի թիւ կազմեցին հայերից 6 եւ ազերիներից 7 մարդ: Ընդհարումներ սկսուեցին եւ նոյնպէս գնալով մեծ չափեր ընդունեցին Մարտակերտի շրջանում, որտեղ լարուածութիւնը պահպանւում է մինչ այժմ: Մի բանի օր ընդամենը տեւած բնականոն աշխատանքից յետոյ կրկին նախկին վիճակը վերականգնուեց Ստեփանակերտի օդանաւակայանում: Չնայած որ զինուորական պարետատունը իր վրայ էր վերցրել ուղեւորների անվտանգութեան ապահովման խնդիրը, օդանաւակայանում պարեկութիւն կատարող ՕՄՕՆականները զինուորականների աչքի առջեւ շարունակում են իրենց վերաբերմունքը հայ ուղեւորների նկատմամբ, ենթարկելով նրանց ծաղրուածանքի, ոտնահարելով մարդկանց արժանապատուութիւնը: ՕՄՕՆականների ջանքերով ստեղծւում է արհեստական դեֆիցիտ, եւ տոմսերը վաճառւում են տասնապատիկ գներով՝ Ստեփանակերտ-Երեւան ուղերթի տոմսի շուկայական արժէքը հասել է 300 ռուբլու:

Կան բազմաթիւ փաստեր, որ ՕՄՕՆականները ճամպրուկները ստուգելիս սեփականում են զանազան իրեր, յատկապէս՝ մթերք: Հայ միլիցիոներները կրկին յայտնուել են դիտորդի դերում: Օդանաւակայանի այս տագնապալի վիճակը, իհարկէ, հնարաւոր դարձաւ այն բանի հետեւանքով, որ Արցախի ղեկավարութեան, մեղմ ասած, անփոյթ վրիպման պատճառով եւ այն էլ 88 թուին խոչալու փոքրիկ աւանը արագօրէն մեծանալով վերածուեց բաղաքատիպ աւանի եւ սպառնում էր բայլ-բայլ իր վրայ վերցնել Ստեփանակերտի՝ որպէս կենտրոնի, վարչական, տնտեսական, բաղաքական դերը: Ազերիների ծրագրերին, այս կէտից ռազմական գործողութիւններին ի պատասխան, ինչպէս յայտնի է, դեռեւս Ապրիլ ամսին հայերի կողմից եղաւ հակահարուած: Հրթիռային գրոհները վերսկսուեցին Օգոստոս ամսին, իսկ Սեպտեմբերի 9ի լոյս 10ի գիշերը գրանցուեց եւս երկու հրթիռային հարուած: Ինչպէս հնարաւոր է լինում այնուհետ պարզել, նման գնդակոծումները խոչալու աւազակաորջին պատճառում են լուրջ աւերածութիւններ ու այլ կարգի վնասներ: Հայկական կողմի տվեալներով զոհերի թիւը 36 է: Սեպտեմբերի 10ի հարուածից յետոյ կան 3 սպանուածներ եւ 4 վիրաւորներ: Դատելով իրադարձութիւնների վերը նշուած միտումներից, ամենամօտ ապագայում խոշորամասշտաբ ընդհարումներ կարող են տեղի ունենալ: Այս ամենը այսօր, ազերիների ռազմական կուտակումներից դատելով, ակնյայտ տեսանելի էր եւ բնական էր լինելու, որ հայկական կողմը, յատկապէս Հայաստանը, համապատասխան եզրահանգումներ կատարէր: Չէ որ Ադրբեջանը ԼՂԻՄ ու Շահումեանի շրջանի անկախութեան հռչակումից յետոյ պէտք է վճռական քայլեր թափի, որքան կարելի է շուտ իր օգտին լուծելու Արցախի հարցը: Այսօր նորից մեր բաղաքական այրերի շուրթերին է յայտնուել Արցախ անունը: Տխուր նախադէպից ելնելով, սակայն, մտավախութիւն կայ, որ այս ամենը ծառայեցնում է նախագահական ընտրապայքարին եւ դրա աւարտից յետոյ նորից տեղի կ'ունենայ դասալքութիւն: Յուսանք, որ սխալուել ենք եւ համենայնդէպս Արցախը լքելու փաստը բանակցութիւնների մասին սարքովի բաղաքական գիտով այլեւս չի բողարկուի: Մանաւանդ որ, այն բանից յետոյ, երբ պրն. Լեւոն Տեր-Պետրոսեանի ճնշմամբ Յուլիս ամսին՝ այս էլ երկրորդ անգամ, ՀՀ խորհրդարանը բանակցութիւնների մասին յայտարարութիւն ընդունեց, Ադրբեջանի Գերագոյն Խորհուրդը դրան արձագանքեց Յուլիսի 22ի ամսաթուով յղուած հետեւեալ պատասխանով.

Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդ

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի աշխատաւորութեան լիազօր ներկայացուցիչների բաղաքական նախաձեռնութեան մասին Ադրբեջանի Գերագոյն Խորհուրդ ուղարկած ձեր յայտարարութիւնը յարուցեց մեր, մեղմ ասած, զարմանքը: ԼՂԻՄը հանդիսանում է Ադրբեջանի Հանրապետութեան անբաժանելի մասը, այդ իսկ պատճառով, Հայաստանի իշխանութեան բարձրագոյն մարմնի՝ նրան վերաբերող ցանկացած որոշում միջամտութիւն է Ադրբեջանի ինքնիշխան պետութեան ներքին գործերին: Զարմանալի է եւ այն, որ նրանք, ովքեր նպաստում էին իրավիճակի ապակայունացմանը տարածաշրջանում, այժմ ներկայանում են իբրեւ շարունակուող ընդհարման բաղաքական կարգաւորման կողմնակիցներ:

Ն. Ա. Ֆաթալիեւ

Ադրբեջանի Հանրապետութեան
Գերագոյն Խորհրդի
Քարտուղարութեան պետ

Ինչեւէ, մենք յուսով ենք, որ իշխանութիւնները, ինչպէս մինչ Հայաստանի նախագահի ընտրութիւնը, այնպէս էլ դրանից յետոյ, այնքան խելացի ու վճռական կը գտնուեն, որ այլեւս նոյնիսկ թուրքերին զարմանալու առիթ չեն տայ: Հողը՝ հայրենիքն է, իսկ հայրենիքը թանկ է՝ լինի Երեւանում, Նոյեմբերեանում, Մուսալեռում թէ Արցախում: